4.	ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ECONOMICS ЭКОНОМИКА

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՏԴ 331.5
DOI: 10.56246/18294480-2025.18-11

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ s.amirkhanyan@gsu.am
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌՈԶԱ
Գավառի պետական համալսարանի
բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի
«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» բաժնի
մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ abrahamyanroza531@gmail.com

21-րդ դարը կարելի է բնորոշել որպես շարժունակության ժամանակաշրջան, իսկ դրա կարևորագույն դրսևորումներից մեկն այսօր աշխատուժի միգրացիան է, որը եղել և մնում է մարդկության զարգացման պատմության անքակտելի բաղադրիչը:

Ժամանակակից համաշխարհային տնտեսության հիմնական բնորոշիչները տնտեսական գործընթացների և դրանց դրսևորման ձևերի ազատականացումն են, կապիտալի և տեխնոլոգիաների անընդհատ ավելացող հոսքերը, որոնց առավելագույն արդյունավետություն ապահովողը մարդիկ են: Այս պարագայում մարդկանց տեղաշարժի՝ միգրացիայի ուսումնասիրությունն ու խնդիրների վերհանումն առավել քան արդիական է:

Աշխատանքային միգրացիան ներկայումս աշխարհում ամենանշանակալից միգրացիոն հոսքերից մեկն է: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունից բնակչության տարերային արտագաղթը, ոչ օրինական աշխատանքային միգրացիայի աճող տեմպերը առաջ են բերում բազմաթիվ սպառնալիքներ, այդ թվում՝ որակյալ աշխատանքային ռեսուրսների կորուստ,

ժողովրդագրական վիճակի վատթարացում, ազգային անվտանգության խաթարում՝ կապված սահմանամերձ բնակավայրերից բնակչության աննախադեպ արտագաղթի հետ:

Հոդվածում ներկայացված են աշխատանքային միգրացիայի հիմնահարցերը բնակչության եկամուտների բաշխման համատեքստում, ուսումնասիրության առարկան աշխատանքային միգրացիային առնչվող հիմնախնդիրների և դրա արդյունավետ կառավարման մեխանիզմների ուսումնասիրությունն է:

Աշխատանքում կիրառվել են վերլուծության, համեմատության, համադրման մեթոդներ:

Աշխատանքի շրջանակներում արվել են կարևոր առաջարկություններ, որոնք կնպաստեն աշխատանքային միգրացիայի ոլորտում առկա հիմնախնդիրների կանոնակարգմանը և առկա բացթողումների վերացմանը:

Բանալի բառեր՝ *աշխատանքային միգրացիա, միգրանտ, բնակչության եկամուտներ, գործազրկություն, արտագաղթ:*

Ժամանակակից աշխարհում միգրացիայի մասշտաբներն ու ընդգրկումը հանգեցրել են նրան, որ տարբեր հարթակներից պարբերաբար բարձրաձայնվում են միգրացիոն հոսքերի կանոնակարգման և կառավարման հրամայականները, որոնք մարտահրավեր են դարձել ինչպես միգրանտների ծագման, այնպես էլ նպատակակետ երկրների համար:

Ընդհանրապես աշխատուժի միգրացիան բավական լուրջ մարտահրավեր է Հայաստանի համար, որտեղ անկախացմանը հաջորդող 30 տարիների ընթացքում հիմնականում առկա է բացասական հաշվեմնացորդ: Հայաստանի բնակչությունը դրսևորում է միգրացիոն ուրույն և հետաքրքիր վարքագիծ: Բազմաթիվ տեսաբաններ ու հետազոտողներ փորձել են բացատրել և հասկանալ այդ վարքագիծը ձևավորող հիմնական դրդապատճառները: Հայաստանի բնակչության միգրացիոն վարքագծի պատճառների վերլուծությունը բավական համակարգային մոտեցում է պահանջում և ընդհանուր առմամբ այն կարելի է դասակարգել երկու խոշոր խմբերում՝ տնտեսական և ոչ տնտեսական շարժառիթներ:

Միգրանտներն ընդհանրապես և աշխատող միգրանտները մասնավորապես մեծ դերակատարում ունեն երկրների զարգացման գործընթացներում: Նրանք թույլ են տալիս ինդուստրիալ երկրներին լուծել իրենց տնտեսական

խնդիրները աշխատանքի շուկայում՝ ժամանակակից գլոբալ տնտեսության պայմաններում:

Հայաստանի Հանրապետությունում անկախացումից ի վեր ընդունվել են միգրացիայի ոլորտը կանոնակարգող մի շարք օրենքներ ու ենթաօրենսդրական ակտեր:

Դրանցից հիմնականները ներկայացնենք գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Միգրացիոն ոլորտը կարգավորող օրենքներ[1]:

Սկսած 1999 թվականից՝ միգրացիոն հիմնախնդիրներով զբաղվող առանձին պետական մարմնի՝ ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության ստեղծմամբ պայմանավորված՝ աշխուժացան ոլորտի օրենսդրական կարգավորմանն ուղղված աշխատանքները: 1999 թվականից ի վեր ընդունվեցին մի շարք օրենքներ ու ենթաօրենսդրական ակտեր:

2004 թվականի հունիսի 25-ին ընդունվել է «ՀՀ-ում բնակչության միգ-ռացիայի պետական կարգավորման հայեցակարգ»-ը, որում ներկայացված են պետական միգրացիոն քաղաքականության սկզբունքները, գերակա խնդիրները և դրանց լուծման հիմնական մեխանիզմներն ու ուղղությունները, որոնք անհրաժեշտ է կատարել միգրացիոն հոսքերը կարգավորող իրավաօրենսդրական

[1] Աղբյուրը՝ Աթոյան Կ., Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում, մենագրություն, Երևան, 2015, էջ 134:

դաշտը միգրացիոն քաղաքականության գերակա խնդիրների հետ ներդաշնակեցնելու նպատակով:

2006 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունվել է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու և բնակվելու, ՀՀ-ում օտարերկրացիների աշխատանքի և այլ հարաբերություններ:

«ՀՀ-ում բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ»-ով սահմանված ժամկետներում պատասխանատու նախարարությունների կողմից վերջին երկու տարիների ընթացքում մշակվել և շրջանառության մեջ են դրվել մի շարք օրենքների նախագծեր, որոնցից են.

1. «ՀՀ քաղաքացիների ՀՀ մուտքի և ելքի մասին»

Նախագիծը մանրամասնում է ՀՀ քաղաքացու՝ երկրից հեռանալու և վերադառնալու սահմանադրական իրավունքի իրականացման հարցերը: Սահմանում է այն բացառիկ դեպքերը, երբ ՀՀ քաղաքացիների ելքը ՀՀ-ից կարող է ժամանակավորապես կասեցվել:

2. «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին»

Նախագիծը կարգավորում է արտագնա աշխատանքների կազմակերպման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է արտագնա աշխատանքների կազմակերպման հիմունքները, մեկնելու կարգն ու պայմանները, արտագնա աշխատանքների կազմակերպման բնագավառում պետական մարմինների և լիցենզավորված կազմակերպությունների իրավասությունները:

3. «Էմիգրացիայի մասին»

Նախագիծը կարգավորում է մշտական բնակության նպատակով ՀՀ ժամանող օտարերկրյա քաղաքացիների, այդ թվում ծագումով հայ օտարերկրացիների ՀՀ մուտքի, կացության և ելքի հետ կապված իրավահարաբերությունները:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո՝ 5 տարվա ընթացքում, ընդունվել են մի շարք օրենքներ, որոնք, ի թիվս այլ հիմնախնդիրների, նպատակաուղղված են նաև միգրացիայի ոլորտին առնչվող խնդիրների կանոնակարգմանը:

Յուրաքանչյուր ոլորտում արդյունավետ և ճիշտ քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար, բացի տեսական դրույթներից, անհրաժեշտ են փորձառական մոտեցումներ: Նման հնարավորություն են ընձեռում հարցումները:

Աշխատանքային միգրացիայի և բնակչության եկամուտների փոխկապվածության վերաբերյալ իրականացված հարցումների արդյունքում արձանագրվել են հետևյալ արդյունքները:

Հարցումներն իրականացվել են 164 մարդու շրջանում, որոնցից 154-ն են աշխատում:

Հարցվածների 1,8%-ը մինչև 18 տարեկան են, 49,4%-ը՝ 18-25 տարեկան, 20,1%-ը՝ 26-35 տարեկան, 15,9%-ը՝ 36-45 տարեկան, 7,3%-ը՝ 46-50 տարեկան և 5,5%-ը՝ 50 տարեկանից բարձր (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Տարիքային խմբեր[1]:

Հարցումներին մասնակցել են 81,7% իգական և 18,3% արական սեռի ներկայացուցիչներ, ընդ որում հարցվածների 44,5%-ը՝ գյուղական, իսկ 55,5%-ը քաղաքային բնակավայրերից են:

Ընտանիքի անդամների թվաքանակի հարցման արդյունքում արձանագրվել են հետևյալ արդյունքները (տե՛ս գծապատկեր 3):

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից իրականացված հարցումների հիման վրա:



Գծապատկեր 3. Ընտանիքի անդամների թիվ[1]:

Ինչպես նկատելի է գծապատկեր 3-ից, հարցվածների 9,8%-ի ընտանիքի անդամների թիվը մինչև 3 է, զգալի տոկոս են կազմում 3-5 ընտանիքի անդամ ունեցողների թիվը՝ 63,4% և 6-8 ընտանիքի անդամ ունեցողների թիվը՝ 23,2%:

Հարցվածների 12,2%-ի ամսական ընտանեկան բյուջեն կազմում է մինչև 100.000 դրամ, 25,6%-ինը՝ 100.000-200.000 դրամ, 20,7%-ինը՝ 200.001-300.000 դրամ, 23,2%-ինը՝ 300.001-500.000 դրամ և 18,3%-ինը՝ 500.000 դրամից ավելի, ընդ որում հարցվածների 93,9%-ը աշխատում է, իսկ չաշխատողները կազմում են 6,1%-ը:

Չաշխատող հարցվածներն այն հարցին, թե որքան ժամանակ է, ինչ փնտրում են աշխատանք, պատասխանել են՝ 90%՝ 6 ամսից ավելի և 10%՝ 1 ամիս:

Այն հարցին, թե քանի տեղում եք աշխատում հարցվածների 80,5%-ը պատասխանել է 1, 14,9%-ը՝ 2, 2,6%-ը՝ 3 և 1,9%-ը՝ այլ:

Հարցումների արդյունքում ամսական աշխատավարձի վերաբերյալ ստացվել են հետևյալ տվյալները: Հարցվածների 43,5%-ը ստանում է մինչև 100.000 դրամ աշխատավարձ, 36,4%-ը՝ 100.000-200.000 դրամ, 13%-ը՝ 200.001-300.000 դրամ, 4,5%-ը՝ 300.001-500.000 դրամ և 2,6%-ը՝ 500.000 դրամից ավելի աշխատավարձ (տե՛ս գծապատկեր 4):

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից իրականացված հարցումների հիման վրա:



Գծապատկեր 4. Ամսական աշխատավարձի չափ[1]:

Նշենք նաև, որ աշխատողների զգալի մասը՝ 71,4%-ը, պատրաստ են փոխել իրենց աշխատանքը այլընտրանքային աշխատանքային պայմանների առկայության դեպքում, ընդ որում նրանց 7,3%-ը մեկնել է արտերկիր՝ միգրացիոն աշխատանքի:

Այն հարցին, թե ինչը կարող է ստիպել ձեզ մեկնել միգրացիոն աշխատանքի, հարցվածների 25,6%-ը նշել է աշխատատեղերի բացակայությունը, 23,2%-ը՝ պատրաստ է մեկնել արտերկիր աշխատելու ցածր աշխատավարձի առկայության պայմաններում, իսկ 2,4%-ը նշել է որևէ մասնագիտության չտիրապետելու հանգամանքը:

Արտերկիր աշխատելու նպատակով մեկնելը բացառելու համար հարցված-ների 40,8%-ի համար ցանկալի աշխատավարձի չափը կազմում է 300.001-500.000 դրամ, 31,7%-ի համար՝ 500.000 դրամից ավելի, 23,8%-ի համար՝ 200.001-300.000 դրամ և 3,7%-ի համար՝ 100.000-200.000 դրամ (տե՛ս գծապատկեր 5):

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից իրականացված հարցումների հիման վրա:



Գծապատկեր 5. Ցանկալի աշխատավարձի չափ[1]:

Ընդգծենք այն, որ 31,1% հարցվածներն ունեն դրսում աշխատող ընտանիքի անդամ, որոնցից 23,8%-ը դրսից ստանում է ֆինանսական աջակցություն:

Ընդ որում հարցվածների 59,8%-ը մասնակցել է վերապատրաստման դասընթացների, իսկ մնացած 40,2%-ը՝ ոչ:

Այսպիսով, ամփոփելով հարցումների արդյունքները՝ կարող ենք նշել, որ հարցվածների 44,5%-ը գյուղական բնակավայրերից են, որոնց մի մասը ստանում է մինչև 100.000 դրամ աշխատավարձ, իսկ մյուս մասը պատրաստ է մեկնել երկրից միգրացիոն աշխատանքի: Միգրացիայի մեկնելը բացատրվում է գյուղական բնակավայրերում ցածր աշխատավարձի, աշխատատեղերի բացակայության, որևէ մասնագիտության չտիրապետելու հանգամանքներով: Ընդ որում աշխատողների 71,4%-ը պատրաստ են փոխել իրենց աշխատանքը այլընտրանքային աշխատանքային պայմանների առկայության դեպքում, չնայած այն հանգամանքին, որ 59,8%-ն էլ չի մասնակցել վերապատրաստման դասընթացների:

Երկրի զարգացումն ու բարեկեցությունը մեծապես կախված են բարձրորակ աշխատուժի առկայությունից և արդյունավետությունից:

Զբաղվածության ոլորտը համարվում է երկրի սոցիալ-տնտեսական կայունության ապահովման առաջնահերթ այն ուղղություններից, որի պետական կարգավորումն ու կառավարումն օբյեկտիվ անհրաժեշտություն են:

Տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից է զբաղվածության ապահովումը: Զբաղվածությունն ինքնանպատակ չէ, այլ բնակչության բարեկեցության պարտադիր պայման, արտագաղթի կանխարգելման կարևորագույն գործոն՝ ապրանքների ու ծառայությունների արտադրության և դրամական եկամուտների մատակարարման իր երկակի ազդեցությամբ: ՀՀ զբաղվածության

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից իրականացված հարցումների հիման վրա:

մակարդակն առավել լավ պատկերացնելու համար կատարվել է աշխատանքային ռեսուրսների կազմի ուսումնասիրություն:

Աշխատանքային ռեսուրսները 2018 թվականից մինչև 2022 թվականն աճել են, մեծացել է նաև զբաղվածների թվաքանակը, սակայն այս պատկերին զուգահեռ մեծ է աշխատանքի թերօգտագործման մակարդակը (տե՛ս գծապատկեր 6):



Գծապատկեր 6. Աշխատանքային ռեսուրսների կազմը 2018-2022 թվականներին, /հազար մարդ/:

Հավելենք նաև, որ 2023 թվականի ընթացքում աշխատանք փնտրողների միջին թվաքանակը եղել է 60.000 մարդ, որոնցից գործազուրկները կազմել են 42.000 մարդ:

Աշխատանքային ռեսուրսների կազմի ուսումնասիրությանը զուգահեռ ներկայացվել և վերլուծվել են նաև ՀՀ սահմանահատումները:

2020 թվականին մեկնածները կազմում են 33.200 մարդ, 2021 թվականին՝ 23.324 մարդ, իսկ 2022 թվականին՝ 23.505 մարդ, այդ թվում մեկնածների 53,2%-ը այլևս չի վերադարձել հայրենիք (տե՛ս գծապատկեր 7):

Գծապատկեր 7. ՀՀ ժամանումներն ու մեկնումները 2020-2022 թվականներին[1]:

Նշենք, որ 2020-2022թթ. հաշվառումից հանված բնակչության տարիքային կազմը 20-24 տարեկաններն են: Ընդ որում մեկնածների մեկնելու հիմնական դրդապատճառներն են աշխատանք փնտրելը, ընտանեկան հանգամանքները, բնակություն հաստատելը, մասնավոր այց բարեկամներին / ընկերներին, ուսումը/ վերապատրաստումը, աշխատանքի ավարտը, պատերազմական գործողու-թյունները և այլն:

Միգրանտների զգալի մասը բնակություն է հաստատել ՌԴ-ում և Վրաստանում:

Վիճակագրական կոմիտեն 2020 թվականի պատերազմից հետո բնակչության հաշվառումից դուրս գալու ակտիվություն է նկատել: Գործընթացը զգալի է հատկապես սահմանամերձ մարզերում՝ Սյունիքում, Վայոց ձորում, Գեղարքունիքում, մասամբ էլ Տավուշում: Վերջին մարդահամարի համաձայն՝ Արմավիրի, Արարատի ու Կոտայքի մարզերում էլ բնակչության թվաքանակը կտրուկ նվազել է: Նշված 3 մարզերն էլ համարվում են խոցելի նվազագույն

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջում առկա տվյալների հիման վրա, https://armstat.am/am/:

պայմանների ապահովման, որոշակի բարեկեցության և, իհարկե, անվտանգության առումով:

2023 թվականին անցկացված մարդահամարի նախնական տվյալներով՝ Հայաստանում 2 միլիոն 928 հազար մարդ է ապրում: Մշտական բնակչությունը նվազել է 86 հազարով: Նրանց գերակշիռ մասը՝ 52 հազարը, սահմանամերձ մարզերից են:

Պատմական ժողովրդագրության մասնագետ Միքայել Մալխասյանը այս ամենը բացատրում է համատարած հիասթափությամբ, ապագայի հանդեպ վստահության պակասով, գնալով ծանրացող սոցիալական խնդիրներով:

Մարզերում բնակչության թվաքանակի կրճատումը պայմանավորված է ոչ այնքան ծնելիության մակարդակի նվազմամբ, որքան բնակչության ներքին տեղաշարժի, Երևան ու երևանամերձ գոտի տեղափոխման և ՀՀ-ից դուրս միգրացիայի մեկնելու հետ: Մասնագետի դիտարկմամբ՝ բնակչության թվաքանակի նվազմանը զուգահեռ մարզերում ապրուստն էլ է դժվարացել; Կան մարզեր, որտեղ բնակչության կեսն աղքատ է, օրինակ, Գեղարքունիքը աղքատության ցուցանիշով ետևում է թողնում Շիրակին՝ դառնալով Հայաստանի Հանրապետության ամենաաղքատ մարզը:

Ընդ որում Գեղարքունիքի մարզում մեծ է նաև գրանցված գործա-զուրկների թվաքանակը. 2022 թվականին մարզում գրանցված գործազուրկների թվաքանակը եղել է 3752, իսկ պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունը մարզում 2024թ. հունվար/ 2023թ. հունվար դրությամբ կազմել է 98%:

2022 թվականին Գավառ խոշորացված համայնքում գրանցված գործազուրկների թվաքանակը կազմել է 840 մարդ:

Այնուհանդերձ, Հայաստանից միգրացիոն ակտիվությունը կարող է պայմանավորված լինել նաև որոշ այլ գործոններով: Դրանցից է «խոպան գնալու» ավանդույթը:

Որոշ գյուղերում, որոնցից բազմաթիվ տղամարդիկ տարիներ շարունակ մեկնում են արտերկիր՝ աշխատանքի, աշխատանքային միգրացիան վերածվել է ընտանիքների կենսապահովման ավանդական միջոցի: Այդ գյուղերի բազմաթիվ երիտասարդ տղաներ բանակից զորացրվելուց հետո մեկնում են արտերկիր աշխատանքի: Կյանքի այդ փուլում նրանք ստիպված են մտածել իրենց ապագա ընտանիքի համար գումար վաստակելու ձևերի մասին: Աշխատանքային միգրացիայի հաջորդ շարժառիթը, որը մեծ տարածում չունի հետևյալն է. երիտասարդները ցանկանում են մեկնել հայրենի գյուղից և ապրել մշակութային և սոցիալական ավելի աշխույժ կյանք ունեցող միջավայրում (ինչպիսին քաղաքն է):

Երիտասարդները հաճախ փորձում են բնակություն հաստատել մարզկենտրոններում կամ Երևանում: Նրանցից շատերը, լինելով ակտիվ մարդիկ, փորձում են Երևանում և մարզկենտրոններում կիրառել տարբեր ոլորտներում իրենց ունեցած հմտությունները և կարողությունները: Նրանցից շատերն էլ հետագայում հանգում են այն եզրակացության, որ ո՛չ Երևանում, ո՛չ մարզկենտրոններում չեն կարողանա գտնել այնպիսի աշխատանք, որն իրենց հնարավորություն կընձեռեր «ծայրը ծայրին հասցնել», որի հետևանքով առաջին պլան է մղվում արտերկիր մեկնելու այլընտրանքը: Հաջորդ գործոնը, որով պայմանավորված է Հայաստանից հեռանալն ու այլ երկրում աշխատելը, լրացուցիչ ծախսերն են կամ էլ ներդրումներ կատարելը: Օրինակ՝ երեխաների կրթության ծախսերը՝ կրկնուսույց վարձելը, բուհի վճարները կամ կրթությունը շարունակելու նպատակով Հայաստանի տարածքում այլ քաղաքներ տեղափոխված երեխաների ապրուստի ծախսերը, սեփական բիզնես սկսելու ծախսերը, հարսանիքի ծախսերը, բնակարանի (տան) ձեռքբերումը կամ վերանորոգումը և այլն:

Ամբողջ աշխարհում տարվում է քաղաքականություն, որը ենթադրում է, որ աշխատանքային միգրանտներն ունենան իրենց ծագման երկրի վրա որոշակի ազդեցություն: Սակայն կարևոր են ոչ միայն ֆինանսական հոսքերը, այլև հենց իրենք՝ միգրանտները, քանի որ նրանք, աշխատելով մեկ այլ երկրում, ձեռք են բերում նոր հմտություններ ու գիտելիքներ, որոնք կարող են կիրառել իրենց հայրենիքում: Մյուս կողմից, կարևորվում են երկարաժամկետ միգրանտները, որոնք, անգամ գտնվելով դրսում, կարող են դարձյալ օգտակար լինել իրենց ծագման երկրի տնտեսության համար՝ ունենալով կարճատև այցեր և վերապատրաստման դասընթացներ:

Ունենալով միգրացիոն այսքան մեծ ներուժ՝ Հայաստանը պարզապես իրավունք չունի այն չօգտագործելու երկրի տնտեսությունը զարգացնելու համար:

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում կատարել ենք հետևյալ եզրակացությունները.

1. Աշխատուժի միջազգային միգրացիայի հիմքում արտադրության գործոնների տեղաշարժն է, որը շուկայական տնտեսությանը ներհատուկ օբյեկտիվ գործընթաց է: Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում բարձրացել են միգրացիոն տրամադրությունները, դրան նպաստել են նաև պատերազմները, անվտանգային շարունակական լարված տրամադրությունները, որոնք Հայաստանի համար ապաբնակեցման լուրջ մարտահրավերներ են դարձել:

2. Միգրացիայի շարունակական աճող տեմպը բերում է նաև «ուղեղների արտահոսքի», որն էլ վտանգում է երբևէ նորարար և գիտելիքահեն տնտեսություն ունենալու հայաստանյան հեռանկարները:

3. Միգրացիոն գործընթացների պետական կարգավորումն անհրաժեշտ է իրականացնել պետական մարմինների միջև գործընթացների բաշխման համահարթ սկզբունքով:

4. Հարցումների արդյունքում արձանագրված տվյալները հետևյալն են. Հարցվածների 25,6%-ը պատրաստ է մեկնել միգրացիոն աշխատանքի՝ աշխատատեղերի բացակայության, 23,2%-ը՝ ցածր աշխատավարձի առկայության, իսկ 2,4%-ը՝ որևէ մասնագիտության չտիրապետելու հանգամանքով: Ուստի միգրացիայի մեկնելը բացատրվում է գյուղական բնակավայրերում ցածր աշխատավարձի, աշխատատեղերի բացակայության, որևէ մասնագիտության չտիրապետելու հանգամանքով: Ընդ որում աշխատողների 71,4%-ը պատրաստ է փոխել իր աշխատանքը այլընտրանքային աշխատանքային պայմանների առկայության դեպքում:

5. Հայաստանի բնակչությունը դրսևորում է միգրացիոն ուրույն և հետաքրքիր վարքագիծ: Հայաստանի բնակչության միգրացիոն վարքագծի պատճառների վերլուծությունը բավական համակարգային մոտեցում է պահանջում և, ընդհանուր առմամբ, այն կարելի է դասակարգել երկու խոշոր խմբերում՝ տնտեսական և ոչ տնտեսական շարժառիթներ:

6. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, 5 տարվա ընթացքում, ընդունվել են մի շարք օրենքներ, որոնք, ի թիվս այլ հիմնախնդիրների, նպատակաուղղված են և որոշակիորեն նպաստել են նաև միգրացիայի ոլորտին առնչվող խնդիրների կանոնակարգմանը:

7. Կարևոր է մշակել այնպիսի ռազմավարություն, որպեսզի միգրանտներն ունենան ազդեցություն իրենց ծագման երկրի վրա և իրենց ձեռք բերած փորձն ու գիտելիքները կիրառեն իրենց երկրում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ առաջարկում ենք.

1. Պետություն-մասնավոր գործընկերություն համագործակցության շրջա-նակներում ստեղծել հնարավորություն օտարերկրյա ներդրումների ծավալների աճի ապահովման համար, ինչպես նաև արտաքին տնտեսական կապերի զարգացման հնարավորությունների բազմազանեցում և ժամանակակից գործիքակազմերի կիրառում, ազատ տնտեսական գոտիների գործունեության բարելավում:

2. Գյուղական բնակավայրերում փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման խթանում՝ հարկային արտոնությունների, սուբսիդիաների, դրամաշնորհների, հողերի արտոնյալ վարձակալության, բիզնես հիմնելու և

թույլտվություն ստանալու պարզեցված վարչական ընթացակարգերի միջոցով: Տվյալ ռեգիոնում պահանջված մասնագիտությունների գծով վերապատրաստման դասընթացների ֆինանսավորում և կազմակերպում: Այս ամենը հնարավորություն կտա ստեղծել նոր աշխատատեղեր գյուղական բնակավայրերում, որն էլ էապես կկրճատի միգրացիոն հոսքերը Հայաստանի Հանրապետությունից:

3. Գյուղական բնակավայրերում վերջին տասնամյակների ընթացքում սեփականաշնորհված հողերի չօգտագործման հետևանքով դրանց անպիտան դառնալն ու այդ հողերից եկամուտների չստացումը լուրջ մարտահրավերներ են ստեղծում: Այդ նպատակով առաջարկում ենք պետության կողմից կենտրոնացված միջոցների և այլ աղբյուրների հաշվին ստեղծել հնարավորություն՝ վարելահողերը վերականգնելու, դրանք օգտագործելի դարձնելու և բնակիչներին հանձնելու համար:

4. «Ուղեղների արտահոսքը» կանխելու, մտավոր կապիտալը երկրում պահելու համար կարևորվում է գիտահետազոտական աշխատանքների իրականացման ու ստեղծագործական զարգացման հնարավորությունների ստեղծումը և դրանց խթանումը, ինչպես նաև մտավոր սեփականության արդյունքների պաշտպանությունը: Մասնավորապես առաջարկում ենք ստեղծել մտավոր սեփականության արդյունքների պաշտպանության կառույց և գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձանց շրջանում պարբերաբար կազմակերպել խրախուսական մրցույթներ, պարգևատրումներ, որը կարժևորի նրանց աշխատանքը:

5. Զբոսաշրջությունը ներկայումս Հայաստանի Հանրապետությունում համարվում է գերակա ուղղություն, որի շրջանակներում չափազանց կարևոր է նաև գյուղական զբոսաշրջության զարգացումը. շատ գյուղական բնակավայրեր ունեն յուրահատուկ բնական, մշակութային տեսարժան վայրեր, նաև տարածաշրջանին բնորոշ, հազվագյուտ արտադրություններ, որոնք կարող են նպաստել զբոսաշրջության զարգացմանը: Զբոսաշրջության ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելը, տեղական տեսարժան վայրերը գրավիչ դարձնելը և հյուրընկալության բիզնեսին աջակցելը կարող են տարբեր ոլորտներում աշխատատեղեր ստեղծել, որն էլ կկրճատի միգրացիոն հոսքերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամբերդ մատենաշար, Արտագնա աշխատանքային միգրացիա գնահատականներ և մտորումներ, Երևան, 2014:

2. Աթոյան Կ., Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում, մենագրություն, Երևան, 2015:
3. Еганян Р., Шахназарян Н., Трудовая миграция из армении, Ереван, 2005:
4. Дутов П., Конституционно-правовое регулирование внешней трудовой миграции, Юнити-Дана, 2022:
5. Ивахнюк И., Международная трудовая миграция, ТЕИС, 2005:
6. Павленко Т., Международная миграция, 2015:
7. https://armstat.am/am/?nid=12-ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ:

BASIC ISSUES OF LABOR MIGRATION REGULATION IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF POPULATION INCOME DISTRIBUTION

AMIRKHANYAN SAMVEL
Head of the Chair of Finance and Management,
Gavar State University
PhD in Economics, Associate professor
e-mail: s.amirkhanyan@gsu.am
ABRAHAMYAN ROZA
1st –year Master Student of the Department of Finance,
Monetary Circulation and Credit
Faculty of Natural Sciences and Economics,
Gavar State University
e-mail: abrahamyanroza531@gmail.com

The 21st century can be characterized as a period of mobility, and one of its most important manifestations today is labor migration, which has been and remains an inseparable component of the history of human development.

The main characteristics of the modern world economy are the liberalization of economic processes and the forms of their manifestation, the ever-increasing flows of capital and technology, maximum efficiency of which is provided by people. In this context, the study of human migration and the identification of related challenges is particularly relevant. Labor migration is currently one of the most significant migration flows in the world. In recent years, the basic emigration of the population from the Republic of Armenia and the increasing rates of illegal labor migration, cause many threats, including the loss of quality labor resources, the deterioration of the

demographic situation, the disruption of national security due to the unprecedented emigration of the population from the border areas.

The article examines labor migration issues in relation to income distribution, focusing on the challenges it presents and effective mechanisms for its management. The study employed methods of analysis and comparison.

Important recommendations were made within the framework of the work, which will contribute to the regulation of existing problems in the field of labor migration and elimination of existing gaps.

Keywords: *labor migration, migrant, population income, unemployment, emigration.*

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ РЕГУЛИРОВАНИЯ ТРУДОВОЙ МИГРАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ РАСПРЕДЕЛЕНИЯ ДОХОДОВ НАСЕЛЕНИЯ

АМИРХАНЯН САМВЕЛ
Кандидат экономических наук, доцент
Заведующий кафедрой финансов и менеджмента ГГУ,
электронная почта: s.amirkhanyan@gsu.am
АБРААМЯН РОЗА
Студентка 1-ого курса магистратуры
отделения финансов, денежного обращения и кредита
факультета естественных и экономических наук ГГУ
электронная почта: abrahamyanroza531@gmail.com

XXI век можно охарактеризовать как период мобильности, и одним из важнейших ее проявлений сегодня является трудовая миграция, которая была и остается неотъемлемой составляющей истории человеческого развития.

Основными характеристиками современной мировой экономики являются либерализация экономических процессов и форм их проявления, постоянно растущие потоки капитала и технологий, максимальная эффективность которых обеспечивается людьми. В этом случае изучение перемещения людей–миграции и постановка проблем более чем актуально.

Трудовая миграция в настоящее время является одним из наиболее значительных миграционных потоков в мире. В последние годы основная эмиграция населения из Республики Армения, растущие темпы нелегальной

трудовой миграции вызывают множество угроз, в том числе потерю качественных трудовых ресурсов, ухудшение демографической ситуации, нарушение национальной безопасности из-за беспрецедентная эмиграция населения из приграничных районов.

В статье представлены вопросы трудовой миграции в контексте распределения доходов населения, предметом исследования является изучение проблем, связанных с трудовой миграцией и механизмов ее эффективного управления.

В работе использовались методы анализа, сравнения и сопоставления.

В рамках работы были даны важные рекомендации, которые будут способствовать урегулированию существующих проблем в сфере трудовой миграции и устранению имеющихся пробелов.

Ключевые слова: *трудовая миграция, мигрант, доходы населения, безработица, эмиграция.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 29.11.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 18.12.2024թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: